Տ. ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԳԵՈՐԳ ՋՈՐԱՎԱՐԻ ՏՈՆԻ ԵՒ ԳԵՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 138-ՐԴ ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(29 սեպտեմբեր, 2012)

«Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան,
ուրացեալ լիցի առաջի Հրեշտակաց Աստուծոյ»
(Ղուկ. ԺԲ. 9):

Սիրելի հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր հանդիսավոր կերպով տոնում է «Սուրբ Գեւորգ» զորավարի հիշատակը, իր զավակներին վերստին հիշեցնելով Աստծու մեծ վկայի հիասքանչ պատմությունը, հավատքի ամրությունն ու ոգու քաջությունը: Ո՞վ էր Ս. Գեւորգը, այդ արտասովոր մարդը, որին քրիստոնեության պատմությունն այդքան մեծ պատիվներ է ընծայել դարեր շարունակ, որը հարատեւ ներկայություն է դարձել Հայ եկեղեցու կյանքում, որի բարեխոսությանն են ապավինում հազար սրտեր, որին շնորհակալություն են հայտնում երախտապարտ հոգիներ:

Աստծու մեծ վկան ծնվել է 275-285թ. սիրիական Պաղեստինում, ազնվական քրիստոնյայի ընտանիքում: Ծնողները նրան Գեւորգ են անվանում, որը նշանակում է հողագործ, առանց իմանալու, թե ապագայում հավատքի ինչ արտեր են հերկվելու նրա արյան վկայությամբ, որքան առատ է պտղաբերելու Տիրոջ այգին նրա անօրինակ քաջության անմահական պտուղներով, նրա հոգեւոր սխրագործությունը քանի սրտեր է բորբոքելու Տիրոջ այգու մշակության համար:

Ս. Գեւորգի կենսագրական տվյալները սուղ են, հայտնի է, որ հայրը հռոմեական բանակի հրամանատար էր: Նրա մանկությունն անցնում է քրիստոնեական միջավայրում, որն իր անջնջելի կնիքն է դնում իր հետագա ընթացքի վրա: Պատանի հասակից ճաշակում է կյանքի դառնությունը, 14 տարեկանում կորցնում է հորը: Մի քանի տարի անց վախճանվում է նաեւ մայրը, այդպիսին է Աստծու արդարությունը, «Նա իր անձրեւը թափում է մեղավորների եւ արդարների վրա, արեգակը ծագեցնում բարիների եւ չարերի վրա»: Այս դժվարությունները չեն ընկճում, սակայն, նրա սերը կյանքի նկատմամբ, չեն տկարացնում նրա հավատքն Աստծու ամենախնամ կամքի հանդեպ: Ճակատագրի հանդիման մենակ, որբացած պատանին որոշում է հոր ճանապարհին հետեւել: Գնում է կայսերական մայրաքաղաք Նիկոմիդիա, ներկայանում Դիոկղետիանոս արքային՝ բանակում ծառայության անցնելու խնդրանքով: Պատմությունն ասում է, որ կայսրը գրկաբաց է ընդունում նրան, քանի որ ճանաչում էր հորը, որպես լավ զինվորականի: Քսան տարեկանում արդեն երիտասարդ Գեւորգը հասնում է զորահրամանատարի աստիճա-

նի, նրան է վստահվում քաղաքի կայսերական թիկնազորի պատասխանատվությունը: Դիոկղետիանոսը, սակայն, պատմությունից հայտնի է քրիստոնյաների դեմ հարուցած իր հալածանքներով: 302 թվականին նա հրաման է արձակում՝ հռոմեական բանակի քրիստոնյա զինվորներին ձերբակալելու, միևնույն ժամանակ պահանջելով մյուսներից՝ զոհ մատուցել հեթանոս աստվածներին: Գեորգը մերժում է ենթարկվել կայսեր հրամանին: Արքան տխրում է, իմանալով նրա քրիստոնյա լինելու մասին, քանզի չէր ուզում կորցնել իր լավագույն հրամանատարներից մեկին, պատմում է վկայաբանության հեղինակը: Կայսրը փորձում է զորավարին զանազան գայթակղիչ խոստումներով եւ պահել քրիստոնեությունից, սակայն Քրիստոսի զինվորը մնում է անդրդվելի: Դիոկղետիանոսը ճարահատյալ մահապատժի հրաման է արձակում: Աստծու վկան նահատակությունից առաջ, ավետարանական խոսքի համաձայն, իր ունեցվածքը բաժանում է աղքատներին եւ պատրաստվում մահվան:

Այդպիսին է Գեորգը, հակառակ բոլոր տեսակի փորձություններին՝ նա շարունակում է հավատարիմ մնալ ավետարանի ոգուն, ինքն իրեն: Սրբի մարմինը նահատակությունից հետո տեղափոխվում է Լիդիա: Կարճ ժամանակ անց նրա գերեզմանը քրիստոնյաների համար դառնում է սրբավայր:

Սիրելի հավատացյալ հայորդիներ,

Ս. Գեորգի հանդեպ բարեպաշտությունը քրիստոնեության վաղ շրջանից մեծ տարածում է գտել Հայոց աշխարհում: Նրա անվան կիրառությունը հայ մատենագրության մեջ հանդիպում է հինգերորդ դարից սկսած: Նա ամենասիրված սրբերից մեկն է մեր ժողովրդի, մեզանից շատերն են դիմում նրա բարեխոսությանը, պատմության ընթացքում բազում վանքեր, եկեղեցիներ եւ մատուռներ են կառուցվել նրա պատվին: Ս. Գեորգի տոնին մեզանում ընդունված կարգի համաձայն հանդիսավոր պատարագ է մատուցվում նրա անունը կրող բոլոր եկեղեցիներում, առավոտ կանուխ ճամփա են ելնում ուխտավորները իրենց հարգանքը մատուցելու մեծ վկայի հիշատակին, եկեղեցիների բակերում կազմակերպում են համայնական մատաղներ, երգով ու պարով է հայ հավատացյալը արտահայտում իր սրտի ուրախությունը, իր հոգեւոր կապվածությունը սրբի հիշատակի հանդեպ: Ժողովրդական բանահյուսությունն անթիվ աղոթքներ ու երգեր է հյուսել նրա կերպարի շուրջ, բազում միջնադարյան գրիչներ անքուն գիշերներ են լուսացրել նրա վկայաբանությունը դարերին ավանդելու, նրա հավատքի օրինակով սերունդներին կրթելու համար: Հիրավի, մեծ է բարեպաշտությունը Ս. Գեորգի վկայության նկատմամբ հայ քրիստոնյայի կյանքում, եւ ժողովրդի կենցաղում առհասարակ:

Սակայն ի՞նչն է հայ ժողովրդին կապում Ս. Գեորգի հետ, ի՞նչ է սովորեցնում մեզ նրա օրինակը: Քրիստոնյա տարբեր ժողովուրդների բարեպաշտությունն ուսումնասիրելիս տեսնում ենք, որ ամեն մեկն իր հոգեւոր կարիքների համեմատ, իր ձգտումներին համապատասխան է ընտրել հովանավոր սրբի, ապավինել նրա բարեխոսությանը: Դա պատահական ընտրություն չէ, որի համար պարտական ենք անհատներին, այլ ժողովրդի հոգեւոր գիտակցությունից բխող հավատքի դրսեւորում: Սրբերն այն մարդիկ են, որոնք մեզ սովորեցնում են ինչպես ապրել, մենք հետեւում ենք նրանց, որոնց օրինակը

հոգեհարազատ է մեր պատմությանը, մեր հոգեւոր ձգտումներին: Հայ ժողովուրդը, որ աշխարհում առաջինն ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն, իր հոգեւոր գիտակցությամբ այն սրբերի հետ է կապվել, որոնց հավատքի օրինակը համընկել է իր հոգեւոր փորձառության հետ:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց անմիջապես հետո հավատքի պաշտպանության հարցը պատմության ընթացքում դարձավ մեզ համար ճակատագրի անբաժանելի մի մասը: Դրա լավագույն օրինակն է հայ ժողովրդի գոյության դարագլուխ կազմող Ավարայրի հերոսամարտը: Պատահական չէ, հետեւաբար, որ հայ ժողովրդի բարեպաշտական մտածողության մեջ ամենամեծ տեղը հատկացված է Ս. Սարգսին եւ Ս. Գեւորգին, երկու զինվորականների: Մենք չենք ընտրել հրաշագործ սրբերի, որոնց բարեխոսությանը դիմում են այս կամ այն հիվանդությունից ազատվելու համար, մենք ընտրել ենք երկու պարզ զինվորականների, որոնք չդավաճանեցին իրենց հավատքը, անվախ հայտարարեցին դրա մասին, մերժեցին ուրանալ: Ազատության համար պայքարի պատմության ընթացքում ո՞վ պետք է ոգեւորեր հայ ժողովրդին հաստատուն մնալու իր հավատքի մեջ, լինելու անդրդվելի, եթե ոչ հավատքի այս համառ ախոյանները: Շատ հեշտ էր Աստծու ծառայի համար առերես ուրանալ իր հավատքը, ներքուստ քրիստոնյա մնալ: Սակայն նա ընտրեց ամենադժվար ուղին, քաջ գիտակցելով, թե ինչ կարեւոր նշանակություն ունի իր որոշումը հետագա քրիստոնեության համար: Նրա նմանների համար է ասված «Արիւն նահատակաց սեմ եկեղեցւոյ»: Եկեղեցու հիմքն էր դնում նա, այն եկեղեցու, ուր արդեն առանց վախի պիտի պաշտեին քրիստոնեական հավատքը: Նրանց քաջության շնորհիվ քրիստոնեությունը հաղթանակ տարավ, չլինեին Աստծու այս քաջարի մարտիկները, քրիստոնեությունը շարունակելու էր արգելված, հալածված կրոն մնալ: Մարդու ամենամեծ շնորհն ազատությունն է, իսկ քրիստոնեությունը միայն ազատության մեջ կարող է լիարժեք արտահայտվել: Այս ազատության համար իրենց կյանքը զոհաբերեցին Աստծու վկաները, այդ թվում նաեւ հավատարիմ վկա Գեւորգ զորավարը:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ

Սրանից 138 տարի առաջ, Գեւորգ Դ. Ամենայն Հայոց Հայրապետը 1874 թ. հիմնադրեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանը, Հայ ժողովրդի համար ուսուցիչներ եւ հոգեւորականներ պատրաստելու նպատակով: Ճեմարանի բացումը համընկնում Ս. Գեւորգի տոնին, եւ ի պատիվ սրբի Հայրապետը Ճեմարանն անվանեց Գեւորգյան, ի մտի ունենալով նրա օրինակը, հայ ժողովրդի հոգեւոր կապվածությունը նրա հետ: Ճիշտ էր ընտրված ճեմարանի անվանումը, քանզի այստեղ պետք է կրթվեին հայ ժողովրդի հավատքի, ազատ ինքնության հոգեւոր մարտիկները: Ճեմարանում կրթված երիտասարդները ոչ միայն Արեւելյան Հայաստանում էին գործունեություն ծավալում, այլեւ ուղարկվում էին Արեւմտյան Հայաստանի գավառները ժողովրդի ազգային գիտակցությունը բարձրացնելու, կրթության լույսը տարածելու: Հիրավի Գեւորգյան հոգեւոր ճեմարանն ավելիով արդարացրեց այն հույսերը, որ Հայոց հայրապետները կապում էին նրա հետ, տալով հայ ժողովրդին ազգային գործիչների մի փաղանգ, որ կերտեց մեր ԺԹ. դարավերջի եւ

Ի. դարի պատմությունը, մշակույթն ու հասարակական կյանքը: Գեորգյան ճեմարանի պատմությունը տարբեր չէր իր ժողովրդի ճակատագրից, բոլոր տեսակի փորձությունները հավասարապես նրան էլ բաժին ընկան: Սակայն հակառակ ճակատագրի դաժան հարվածներին այսօր համառ կանգնած է նա, դեմքով դեպի Արարատ, իր առաքելությանը հավատարիմ: Այսօր Գեորգյան ճեմարանի 138 րդ տարեդարձն է:

Վեհափառ Հայրապետի հատուկ տնօրինությամբ վերականգնվում է Գեորգյան ճեմարանի տարեդարձը Ս. Գեորգի տոնին նշելու ավանդույթը:

Վեհափառ Տեր, օգտվելով բարեպատեհ առիթից՝ Գեորգյան ճեմարանի տեսչության, մանկավարժների եւ սաների անունից մեր որդիական երախտագիտությունն ենք հայտնում Ձերդ Սրբությանը, այն ջանքերի համար, որ ներդնում եք հոգեւոր կրթությունը բարձր չափանիշների հասցնելու համար: Վստահ ենք, որ Գեորգյան ճեմարանի հանդեպ Ձեր նախընթաց հայրապետների փայփայած երազն իր լրումին կհասնի: Մանավանդ այնպիսի մի բախտորոշ ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդն իր անկախությունն է կերտում: Ձեր շնչով դաստիարակված ճեմարանական սերունդն իր ներդրումը կունենա մեր ազատ հայրենիքի վերակառուցման, Հայոց եկեղեցու վերանորոգության սրբազան առաքելության մեջ: Հայոց հայրապետների հոգիները երկնքում ցնծում են այս պահին, տեսնելով Հայոց Եկեղեցու բռնած վերածնունդի ընթացքը, հավատքի վերազարթնումը ժողովրդի գիտակցության մեջ:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն, եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեսեանդ. ամէն: